



COVID-19-ի պատվաստանյութի խթանիչ դեղաչափերի տեղեկատու ուղեցույց բոլոր տարիքի անձանց համար

Դուք կամ ձեր երեխան պատվաստվել էիք COVID-19-ի պատվաստանյութի առաջնային շարքով, որպեսզի պաշտպանեք ձեզ և ուրիշներին ծանր հիվանդացությունից, հոսպիտալացումներից և նույնիսկ COVID-19-ով պայմանավորված մահվանից: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ չնայած COVID-19-ի պատվաստանյութերն արդյունավետ են, ժամանակի ընթացքում դրանք կորցնում են իրենց պաշտպանության աստիճանը:

Այժմ խթանիչ դեղաչափ ստանալը մնում է այս պաշտպանությունը շարունակելու ամենաարդյունավետ եղանակը:

Ստուգեք ստորև գծապատկերը, որպեսզի տեսնեք, թե արդյոք դուք կամ ձեր երեխան իրավասու եք ստանալ COVID-19-ի պատվաստանյութի խթանիչ*:

| Եթե ստացել եք... | Ով պետք է ստանա խթանիչ դեղաչափ | Որ խթանիչ դեղաչափը պետք է ստանալ | Երբ պետք է ստանալ խթանիչ դեղաչափը |
|------------------------------|---------------------------------|--|--|
| Moderna | 6 ամսական և ավելի մեծ երեխաները | 6 ամսականից 4 տարեկան երեխաները պետք է ստանան թարմացված երկվալենտ խթանիչ, որը նույն ապրանքանիշի է, ինչ իրենց ստացած առաջնային շարքը | Իրենց վերջին դեղաչափն ավարտելուց հետո առնվազն 2 ամիս անց (առաջնային շարք կամ միավալենտ խթանիչ) |
| | | 5 տարեկան և ավելի մեծ անձինք պետք է ստանան Pfizer-ի կամ Moderna-ի թարմացված երկվալենտ խթանիչ | |
| | | 18 տարեկան և ավելի բարձր տարիք ունեցող անձինք, ովքեր չեն ստացել նախորդ խթանիչը, կարող են նաև ընտրել ստանալ Novavax-ի խթանիչ, եթե նրանք չեն կարող կամ չեն ստանա թարմացված մՌՆԹ խթանիչ: | Առաջնային շարքից հետո առնվազն 6 ամիս անց: |
| Pfizer | 5 տարեկան և ավելի մեծ անձինք | 5 տարեկան երեխաները , ովքեր ստացել են Pfizer, կարող են միայն ստանալ Pfizer-ի թարմացված երկվալենտ խթանիչ | Իրենց վերջին դեղաչափն ավարտելուց հետո առնվազն 2 ամիս անց (առաջնային շարք կամ միավալենտ խթանիչ) |
| | | 6 տարեկան և ավելի մեծ անձինք պետք է ստանան Pfizer-ի կամ Moderna-ի թարմացված երկվալենտ խթանիչ՝ անկախ իրենց առաջնային շարքից | |
| | | 18 տարեկան և ավելի բարձր տարիք ունեցող անձինք, ովքեր չեն ստացել նախորդ խթանիչը, կարող են նաև ընտրել ստանալ Novavax-ի խթանիչ, եթե նրանք չեն կարող կամ չեն ստանա թարմացված մՌՆԹ խթանիչ: | Առաջնային շարքից հետո առնվազն 6 ամիս անց: |
| Johnson & Johnson | 18 տարեկան և ավելի մեծ անձինք | 18 տարեկան և ավելի բարձր տարիք ունեցող անձինք պետք է ստանան թարմացված երկվալենտ Pfizer կամ Moderna խթանիչ | Իրենց վերջին դեղաչափն ավարտելուց հետո առնվազն 2 ամիս անց (առաջնային շարք կամ միավալենտ խթանիչ) |
| | | 18 տարեկան և ավելի բարձր տարիք ունեցող անձինք, ովքեր չեն ստացել նախորդ խթանիչը, կարող են նաև ընտրել ստանալ Novavax-ի խթանիչ, եթե նրանք չեն կարող կամ չեն ստանա թարմացված մՌՆԹ խթանիչ: | Առաջնային շարքից հետո առնվազն 6 ամիս անց: |
| Novavax | 12 տարեկան և ավելի մեծ անձինք | 12 տարեկան և ավելի բարձր տարիք ունեցող անձինք պետք է ստանան թարմացված երկվալենտ Pfizer կամ Moderna խթանիչ | Իրենց առաջնային շարքից հետո առնվազն 2 ամիս անց |
| | | 18 տարեկան և ավելի բարձր տարիք ունեցող անձինք, ովքեր չեն ստացել նախորդ խթանիչը, կարող են նաև ընտրել ստանալ Novavax-ի խթանիչ, եթե նրանք չեն կարող կամ չեն ստանա թարմացված մՌՆԹ խթանիչ: | Առաջնային շարքից հետո առնվազն 6 ամիս անց: |

Եթե ձեզ մոտ չափավոր կամ ծանր հիմունային անբավարարություն է, այդ դեպքում ուղեցույցները կտարբերվեն:



*Մարդիկ, ովքեր վերջերս վարակվել են SARS-CoV-2-ով, կարող են դիտարկել COVID-19-ի իրենց առաջնային կամ խթանիչ դեղաչափի հետաձգումը ախտանիշների ի հայտ գալուց կամ դրական թեստից հետո 3 ամսով (եթե վարակն ասիպտոմ էր): Ուսումնասիրությունները ցույց են տվել, (անգլերեն) որ վարակի և պատվաստման միջև ավելացված ժամանակը կարող է հանգեցնել պատվաստման նկատմամբ բարելավված իմունային արձագանքի: Նաև նորից վարակվելու ցածր ռիսկ է նկատվել վարակից հետո շաբաթներ կամ ամիսներ անց: Պետք է հաշվի առնել անհատական գործոններ ինչպիսիք են՝ COVID-19-ով ծանր հիվանդանալու ռիսկը (անգլերեն), COVID-19-ի համայնքային մակարդակը (անգլերեն) կամ SARS-CoV-2 գերիշխող շտամի առանձնահատկությունները, երբ որոշվում է, թե արդյոք պետք է հետաձգել խթանիչ դեղաչափի ստացումը վարակվելուց հետո:

COVID-19-ի պատվաստանյութի խթանիչ դեղաչափերի մասին ՀՏՀ-ներ

Ի՞նչ է թարմացված/երկվալենտ խթանիչը:

Թարմացված/երկվալենտ COVID-19-ի խթանիչը պատվաստանյութի բանաձև է, որը և՛ բարձրացնում է իմունիտետը բնօրինակ կորոնավիրուսային շտամի դեմ, և՛ նաև պաշտպանում է Omicron-ի ավելի նոր տարբերակներից, որոնք կազմում են ընթացիկ դեպքերի մեծ մասը: Թարմացված խթանիչները նախատեսված են վիրուսից օպտիմալ պաշտպանություն ապահովելու և ժամանակի ընթացքում պատվաստանյութի արդյունավետության նվազման դեմ պայքարի համար:

Ինչո՞ւ են խթանիչ դեղաչափերը կարևոր:

Խթանիչ դեղաչափերը կօգնեն տրամադրել շարունակական պաշտպանություն ծանր հիվանդացությունից: 6 ամսական և ավելի մեծ ցանկացած անձ պետք է ստանա խթանիչ դեղաչափ, որպեսզի պաշտանված լինի իր պատվաստումներով: Որոշակի անձինք, օրինակ՝ չափավոր կամ ծանր իմունային անբավարարություն ունեցողները, կարող են պահանջել լրացուցիչ դեղաչափեր՝ իմունիտետը բարձրացնելու նպատակով: Սա հատկապես կարևոր է ավելի վարակիչ շտամների և COVID-19-ի դեպքերի աճի պայմաններում, որոնք ավելանում են Միացյալ Նահանգներում:

Եթե պետք են խթանիչ դեղաչափեր, արդյոք դա նշանակո՞ւմ է, որ պատվաստանյութերը չեն աշխատում:

Ոչ: ԱՄՆ-ում մեր ունեցած COVID-19-ի ներկայիս պատվաստանյութերը լավ են աշխատում, որպեսզի կանխարգելեն ծանր հիվանդությունը, հոսպիտալացումը և մահը, նույնիսկ վիրուսի շտամների դեմ: Ինչևէ, հանրային առողջության փորձագետները նկատում են նվազեցված պաշտպանություն COVID-19-ի մեղմ և չափավոր հիվանդացության դեմ, հատկապես բարձր ռիսկի տակ գտնվող բնակչության շրջանում: Ստեղծվել են թարմացված/երկվալենտ խթանիչներ՝ օգնելու բարձրացնել իմունիտետը և ավելի լավ պաշտպանություն ապահովել որոշ ավելի նոր շտամներից:

Ի՞նչ պետք է բերեմ ինձ հետ խթանիչ դեղաչափի ժամադրությանը:

Ձեզ հետ վերցրեք ձեր/ձեր երեխայի պատվաստումների քարտը (միայն անգլերեն) խթանիչ դեղաչափի ժամադրության համար, որպեսզի մատակարարը կարողանա հաստատել, որ պատվաստանյութի սկզբնական շարքն արված է: Եթե քարտը կորցրել եք, մատակարարը կարող էք փնտրել ձեր գրառումը:

Ո՞րն է պատվաստանյութի լրացուցիչ դեղաչափի և խթանիչ դեղաչափի միջև տարբերությունը:

Լրացուցիչ դեղաչափը նախատեսված է այն պացիենտների համար (տես վերևի աղյուսակը), ովքեր ավարտել են առաջնային պատվաստանյութերի շարքը, բայց չունենին բավականաչափ ուժեղ իմունային արձագանք:

Խթանիչ դեղաչափը տրվում է՝ ուժեղացնելու կամ վերականգնելու պաշտպանությունը և/կամ իմունիտետը սկզբնական պատվաստանյութի շարքի թուլացումից որոշ ժամանակ անց:

Պատվաստանյութի ո՞ր ապրանքանիշը կարող եմ ստանալ իմ խթանիչի համար:

6 ամսականից 4 տարեկան երեխաները պետք է ստանան թարմացված երկվալենտ խթանիչ, որը նույն ապրանքանիշի է, ինչ իրենց ստացած առաջնային շարքը:

5 տարեկան երեխաները, ովքեր ավարտել են Pfizer-ի առաջնային շարքը, պետք է միայն ստանան Pfizer-ի թարմացված երկվալենտ խթանիչ:

5 տարեկան երեխաները, ովքեր ստացել են Moderna, կարող են ստանալ Moderna-ի կամ Pfizer-ի երկվալենտ թարմացված խթանիչ:

6 տարեկան և ավելի մեծ անձինք կարող են ստանալ Pfizer-ի կամ Moderna-ի թարմացված խթանիչ դեղաչափ՝ անկախ իրենց ստացած առաջնային շարքի պատվաստանյութի կամ նախորդ խթանիչ դեղաչափի ապրանքանիշից:

18 տարեկան և ավելի մեծ անձինք կարող են նաև ստանալ Novavax-ի խթանիչ, եթե նրանք ավարտել են առաջնային շարքի պատվաստումը, բայց նախկինում չեն ստացել COVID-19-ի խթանիչ, և եթե նրանք չեն կարող կամ չեն ստանալ թարմացված mRNA խթանիչ դեղաչափ:

Ե՞րբ է անձը համարվում պաշտպանված վիրուսից:

Դուք պաշտպանված եք ձեր COVID-19-ի պատվաստանյութերով, եթե ավարտել եք COVID-19-ի պատվաստանյութերի առաջնային շարքը և ստացել CDC-ի (Centers for Disease Control, Հիվանդությունների վերահսկման կենտրոններ) կողմից ձեզ համար խորհուրդ տրվող ամենավերջին խթանիչ դեղաչափը:

Արդյոք հնարավո՞ր է ստանալ խթանիչ դեղաչափ մյուս պատվաստանյութերի հետ միասին, օրինակ՝ գրիպի համար:

Այո: Դուք կամ ձեր երեխան կարող եք ստանալ COVID-19-ի պատվաստանյութը մյուս պատվաստանյութերի հետ միաժամանակ: Կարիք չկա, որ COVID-19-ի պատվաստումից առանձին պլանավորեք ձեր երեխայի դայրոցական պարտադիր պատվաստումները (միայն անգլերեն) կամ այլ խորհուրդ տրվող պատվաստանյութերը: COVID-19-ի պատվաստանյութի ժամադրությունը մեկ այլ հնարավորություն է, որպեսզի դուք կամ ձեր երեխան ստանաք բոլոր խորհուրդ տրվող պատվաստանյութերը:

Ունեք այլ հարցե՞ր: Այցելեք՝ doh.wa.gov/covidbooster

